ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2011 թվականի թիվ 45 -Ա

2011Թ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ <<ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ>> ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ <<ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆ >> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2011թ. ՀՀ պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով ՀՀ Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին <<Հաղթանակի և խաղաղության տոն >> միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2011թ. ՀՀ պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով ՀՀ Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 250.0 հազ. դրամ գումարն ուղղել << Հաղթանակի և խաղաղության տոն >>միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանին << Հաղթանակի և խաղաղության տոն >> միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

03 մայիսի 2011թ.
ք. Իջևան